



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ  
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ (DIGEST)  
N3(4) 2009թ. հունվարի 21- փետրվարի 20

20 մարտի, 2009թ.

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ.....	3
1.1 Օրենքներ .....	3
1.2 ՀՀ կառավարության որոշումներ.....	4
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ .....	9
2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ .....	11
3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ.....	14
3.1 Կառուցվածք և գործառույթներ.....	14
3.2 Ծրագրեր և կատարողականություն .....	14
3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների.....	16
3.4 Միջազգային համագործակցություն.....	17
3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում .....	18
3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն.....	18
3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր.....	19

## 1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ՝

### 1.1 Օրենքներ

Փաստաթուղթ.	«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	26 դեկտեմբերի, 2008 թ., ՀՕ-28-Ն
Հրատարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 5 (671), 26.01.2009թ.
Ուժի մեջ է.	01 մարտի, 2009թ.

#### Համառոտ նկարագիր

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններին և լրացումներին համաձայն.

ա) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկից հանվել են գինեկոնյակը և խաղողի գինեկոնյակից ստացված կոնյակի սպիրտը,

բ) բարձրացվել են Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ոգելից խմիչքների համար ակցիզային հարկի դրույքաչափերը (ներառյալ՝ գանձման ենթակա ակցիզային հարկի նվազագույն չափերը): Նշված դրույքաչափերը (բարձրացումը) գործելու է մինչև 2011թ. վերջը:

Փաստաթուղթ.	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	26 դեկտեմբերի 2008 թ., ՀՕ-33-Ն
Հրատարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 5 (671), 26.01.2009թ.
Ուժի մեջ է.	05 փետրվարի, 2009թ.

#### Համառոտ նկարագիր

«Համահայկական բանկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանվել է, որ Համահայկական բանկը բանկային գործունեություն իրականացնելու համար ստանում է "Լիցենզավորման մասին" ՀՀ օրենքով սահմանված բանկային գործունեության լիցենզիա, սակայն Համահայկական բանկի գրանցումն ու լիցենզավորումն իրականացվում են «Համահայկական բանկի մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով: Որպես առանձնահատկություն, օրենքի 11-րդ հոդվածով սահմանվել է, որ Համահայկական բանկն ազատվում է գրանցման և լիցենզավորման համար սահմանված պետական տուրքի վճարումից:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքով սահմանվել է, որ Համահայկական բանկն ազատվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով բանկերի պետական գրանցման համար սահմանված 40,0 հազ. դրամի չափով պետական տուրքի և 19-րդ հոդվածով բանկային գործունեության լիցենզիայի տրման համար սահմանված 3 մլն. դրամ տարեկան պետական տուրքի վճարումից:

Փաստաթուղթ.	«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	26 դեկտեմբերի 2008 թ., ՀՕ-31-Ն
Հրատարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 5 (671), 26.01.2009թ.
Ուժի մեջ է.	05 փետրվարի, 2009թ.

#### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացումներով սահմանվել են, որ Համահայկական բանկի թողարկած պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս գեղջի ձևով ստացված եկամուտները, ինչպես նաև Համահայկական բանկի թողարկած պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամուտները համարվում են նվազեցվող եկամուտներ և

\* Դիտարկվել և հիմք են ընդունվել.

- ՀՀ պաշտոնական տեղեկագրեր. թիվ 4(670), 21 հունվարի 2009թ.-թիվ 10(676), 18 փետրվարի 2009թ.
- ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի ակտերի տեղեկագրեր, թիվ 3 (321), 26 հունվարի 2009թ.-թիվ 7(325), 18 փետրվարի, 2009թ.





Հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին հանձնարարվել է յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում ՀՀ կառավարություն և երկայացնել տեղեկանք տվյալ եռամսյակում որոշման N2 հավելվածում ներառված գերակա խնդիրների լուծման միջոցառումների իրականացման ընթացքի մասին:

Փաստաթուղթ.	ՀՀ կառավարության 2006թ. ապրիլի 27-ի N 582-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
Ամսաթիվը և համարը.	15 հունվարի, 2009թ., N 46-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N6 (672), 29 հունվարի, 2009թ.
Ուժի մեջ է.	1 փետրվարի, 2009թ.

#### Համառոտ նկարագիր

“Հարկերի մասին” ՀՀ օրենքի 30-րդ, “Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածներին և ՀՀ Նախագահի 2008թ. օգոստոսի 20 -ի ՆՀ-226-Ն հրամանագրին համապատասխան` ՀՀ կառավարությունը կայացրել է որոշում, համաձայն որի ՀՀ կառավարության 2006թ. ապրիլի 27-ի “Հաշվետու տարվա արդյունքներով հարկային մարմնի կողմից հարկ վճարողների (ապահովադիրների) վերաբերյալ տվյալների հրապարակման կարգը հաստատելու մասին” N582 -Ն որոշման մեջ կատարվել են որոշ փոփոխություններ և լրացումներ: Մասնավորապես,

- որոշման մեջ “Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին” բառերը
- փոխարինվել են “Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին” բառերով, այսուհետ հարկային մարմինը տվյալ եռամսյակի ընթացքում ավելացված արժեքի հարկ վճարող համարվողների հարկ վճարողի հաշվառման համարները և անվանումն էրը տեղադրում է հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում ([www.taxservice.am](http://www.taxservice.am)):

Փաստաթուղթ.	ՀՀ կառավարության 2001թ. մարտի 27-ի N 239 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին
Ամսաթիվը և համարը.	22 հունվարի, 2009թ., N79-Ն
ՀՀ պաշտոնական տեղեկագիր	ՀՀ պաշտոնական տեղեկագիր 8(674), 11 փետրվարի 2009թ.
Ուժի մեջ է.	12 փետրվարի, 2009թ.

#### Համառոտ նկարագիր

“Հայաստանի Հանրապետության 2001 թվականի թիվ 239 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության 22.01.2009 թ. թիվ 79-Ն որոշման ընդունումը պայմանավորված է 2008 թվականի օգոստոսի 21-ի “ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ օրենքի ընդունմամբ, որում նախատեսվեց սահմանել և հայտարարագրել “Ժամանակավոր ներմուծում վերամշակման համար” մաքսային ռեժիմով ներմուծված և “Ժամանակավոր արտահանում” վերամշակման համար” մաքսային ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից ստացվելիք թափոնները:

Նույն որոշմամբ սահմանվել են նաև թափոն և մնացորդ հասկացությունները, ինչպես նաև “Ժամանակավոր ներմուծում” վերամշակման համար” ռեժիմով ներմուծված և “Ժամանակավոր արտահանում” վերամշակման համար” ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության սահմանման կարգը:

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 26-ի N 1325-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	22 հունվարի, 2009 թ., 94-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 8 (674), 11/02/2009թ.
Ուժի մեջ է.	21 փետրվարի 2009թ.

#### Համառոտ նկարագիր

ՀՀ կառավարության 27.11.2003թ. “Հսկիչ գնումների ֆինանսավորման աղբյուրների և ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգը հաստատելու մասին” N1 561-Ն որոշմանը համապատասխան, հսկիչ գնման արդյունքում հսկիչ գնում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից

տնտեսավարող սուբյեկտին վերադարձվում են հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքները : Որոշմամբ սահմանվել է հարկային մարմնի կողմից իրականացված հսկիչ գնման ժամանակ ՀԴՄ կտրոն տրամադրելու դեպքում ձեռք բերված ապրանքների վերադարձի իրականացման ընթացակարգը:

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 7-ի N 998-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 27-ի N1561-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	22 հունվարի, 2009 թ., 95-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 8 (674), 11/02/2009թ.
Ուժի մեջ է.	21 փետրվարի 2009թ.

**Համառոտ նկարագիր**

“Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածին համապատասխան, նույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված տուգանքների գումարների երեսուն տոկոսի չափով մասհանումները գանձվում են “Հարկային ծառայության մասին” ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդ: Ֆոնդի միջոցները ծախսվում են նաև օրենսդրությամբ սահմանված կարգով հսկիչ գնումների ֆինանսավորման համար:

Որոշմամբ կանոնակարգվել է հարկային մարմնի կողմից իրականացվող հսկիչ գնումների ֆինանսական աղբյուրների և ձեռք բերված ապրանքների տնօրինման գործընթացը:

Հսկիչ գնման արդյունքում հսկիչ գնում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից հանձնարարագիրը ներկայացվելուց և արձանագրությունը կազմվելուց հետո, բայց ոչ ուշ քան կարգով սահմանված ժամկետները, տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող և (կամ) դրամական հաշվարկներ կատարող աշխատողին են վերադարձվում հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքները: Վաճառողը ընդունում է ապրանքները, վերադարձնում ստացված գումարը (վերադարձված ապրանքների հետընդունման ակտում նշված գումարները չեն ներառվում իրացումից հաստիքի մեջ), անկախ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու հանգամանքից: Ապրանքների վերադարձի դեպքում կազմվում է վաճառված ապրանքների հետընդունման ակտ:

Որոշմամբ հաստատված կարգում սահմանվել են հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքների վերադարձի հետևյալ ժամկետները՝

ա) դեղերի, անասնաբուժական դեղամիջոցների, հատկապես արագ փչացող սննդամթերքի, կենդանական ծագում ունեցող մթերքի, բույսերի ու բուսական արտադրանքի վերադարձը կատարվում է անմիջապես հսկիչ գնման ժամանակ՝ հանձնարարագիրը ներկայացնելու պահին ,

բ) “ա” կետում չնշված պիտանեվիության ժամկետ ունեցող ապրանքների վերադարձը կատարվում է մինչև հսկիչ գնման հանձնարարագրում նշված՝ հսկիչ գնումների իրականացման ժամանակահատվածի ավարտը, բայց ապրանքների պիտանեվիության համար սահմանված ժամկետներում,

գ) հսկիչ գնում կատարելու պահին սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների ներմուծման, արտահանման, արտադրության, փաթեթավորման, իրացման փուլերում անվտանգության համար օրենքով սահմանված պահաջները չբավարարող ապրանքների, ինչպես նաև “ա” և “բ” կետերում չնշված ապրանքների վերադարձը կատարվում է մինչև հսկիչ գնման հանձնարարագրում նշված՝ հսկիչ գնումների իրականացման ժամանակահատվածի ավարտը :

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1330-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	29 հունվարի, 2009 թ., 96-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 8 (674), 11/02/2009թ.
Ուժի մեջ է.	21 փետրվարի 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Որոշմամբ սահմանվել է, որ ՀԴՄ կտրոնների հատուկ համարների վիճակահանության համար առանձնացվում են ութ մեխանիկական սարքեր և շահող համարի թվերի դուրս բերումն իրականացվում է այդ սարքերի միջոցով:

Վիճակահանության արդյունքում շահած ՀԴՄ կտրոններ տիրապետող ֆիզիկական անձինք պարգևավճարներ և բոնուսներ կարող են ստանալ պարգևավճարների (բուսների) տրամադրման նպատակով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հետ պայմանագիր կնքած բանկերից :

Փաստաթուղթ.	“Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով հաշվիչ (չափիչ) սարքերի տեղադրման ու կնքման կարգը, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգն ու ժամկետները հաստատելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	22 հունվարի, 2009 թ., 97-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 8 (674), 11/02/2009թ.
Ուժի մեջ է.	22 փետրվարի 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Որոշմամբ հաստատված կարգով կանոնակարգվում է բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով հաշվիչ (չափիչ) սարքերի տեղադրման ու կնքման կարգը: Տեղադրված չափման միջոցները պետք է լինեն ստուգաչափված և պարտադիր կնքված հարկային և բնապահպանական մարմինների կողմից: Կարգի պահանջների խախտմամբ (այդ թվում՝ չկնքված չափման միջոցներով կամ կապարակնիքների խախտմամբ (կապարադրոշմի վնասելը, ջարդելը կամ պոկելը, մետաղալարի կտրվելը), չափման միջոցի համար սահմանված սխալանքից ավելի շեղում ունեցող հաշվառքի ցուցմունք կամ հաշվեկշիռ ունեցող չափման միջոցով) հանքային ջրի արդյունահանումը (ածխաթթու գազի արտադրությունը) համարվում է փաստացի ծավալների հաշվառման կարգի խախտում, ինչպես նաև առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով: Կարգով սահմանվել է նաև կապարադրոշմները պոկելու դեպքերը: Մասնավորապես, երբ կապարադրոշմները նախատեսվում է պոկել հարկային կամ բնապահպանական մարմնի նախաձեռնությամբ, ապա ջրօգտագործողին ստուգաճշտման անհրաժեշտության մասին պաշտոնապես ծանուցվելու օրվանից 10-օրյա ժամկետում կապարակնքում իրականացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց կողմից համատեղ պոկվում են կապարադրոշմները՝ կազմելով կապարադրոշմները պոկելու մասին արձանագարություն: Ջրօգտագործողի բնականոն աշխատանքը չընդհատելու նպատակով հարկային և բնապահպանական մարմնի կողմից ջրօգտագործողին ժամանակավոր օգտագործման համար տրամադրվում է ստուգաչափման դրական արդյունքներ ունեցող չափման միջոց, իսկ ջրօգտագործողին առաջարկվում է չափման միջոցը ներկայացնել ստուգաճշտման:

Հարկային և բնապահպանական մարմինների կողմից հաշվիչ սարքերի տվյալները կարող են արձանագրվել յուրաքանչյուր հաշվետու ամսվա կտրվածքով՝ տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը, հաշվետու եռամսյակի կտրվածքով՝ տվյալ եռամսյակի վերջին աշխատանքային օրը, հաշվետու տարվա կտրվածքով՝ տվյալ տարվա վերջին աշխատանքային օրը:

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 17-ի N 986 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	22 հունվարի, 2009 թ., 83-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 8 (674), 11/02/2009թ.
Ուժի մեջ է.	21 փետրվարի 2009թ.



**Համառոտ նկարագիր**

Որոշմամբ սահմանվել է, որ օգտակար հանածոների արդյունահանման համար բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների (սահմանափակումների) ստուգում իրականացնող մարմինները սահմանված կարգով ներկայացվող ստուգմանը վերաբերող նյութերում ներառում են նաև ստուգման արդյունքում արձանագրված ելակետային տվյալները (համապատասխան կոորդինատային նիշերով) :

Սահմանվել է օրենքով սահմանված կարգով օգտակար հանածոների արդյունահանման (այդ թվում՝ օգտակար հանածոյի լեռնային զանգվածից հանքատաղքատեսակի հիմնական ու ուղեկից բաղադրիչների էլքի) չափագրման նպատակով հարկային մարմնի ներկայացրած հարցման հիման վրա օգտակար հանածոների արդյունահանման համար բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգում իրականացնող մարմինները տրամադրում են վերջին ստուգման արդյունքում արձանագրված ելակետային տվյալները՝ համապատասխան կոորդինատային նիշերով և ստուգումների ընթացքում ստացված գծապատկերները : Չափագրումների արդյունքով արձանագրված ելակետային տվյալները՝ համապատասխան կոորդինատային նիշերով, հարկային մարմինները չափագրման ավարտից հետո տրամադրում են փաստացի ծավալների չափաքանակների ստուգում իրականացնող մարմիններին՝ ստուգումներ իրականացնելու ժամանակ կիրառելու նպատակով:

Հարկային մարմնի կողմից իրականացվող չափագրումներին կարող են ներգրավվել փաստացի ծավալների նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի ներկայացուցիչ կամ անկախ փորձագետ:

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացում կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	22 հունվարի, 2009 թ., 78-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 8 (674), 11/02/2009թ.
Ուժի մեջ է.	12 փետրվարի 2009թ.

**Համառոտ նկարագիր**

ՀՀ նախագահի 20.08.2008թ. “Հայաստանի Հանրապետության նախագահի 2002 թվականի մարտի 16-ի ՆՀ-1063 հրամանագրում փոփոխություն և լրացում կատարելու մասին” ՆՀ-226-Ն հրամանագրով ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեն և ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայությունը միաձուլման ձևով վերակազմակերպվեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի: Վերոհիշյալ փոփոխությամբ պայմանավորված ՀՀ կառավարության թվով 33 որոշումներում “ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայություն” բառերը փոխարինվեցին “ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե” կամ “հարկային մարմին” բառերով (համապատասխան հոլովաձևերով), իսկ ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե բառերը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կամ մաքսային մարմին բառերով (համապատասխան հոլովաձևերով):

**1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ**

Փաստաթուղթ.	“Արտոնագրային վճար վճարող համարվելու համար հարկային մարմին ներկայացվող դիմում-հայտարարության, արտոնագրային վճար վճարող համարվող ֆիզիկական անձանց հարկային մարմնի կողմից տրվող արտոնագրի և արտոնագրային վճար վճարողների կողմից պարտադիր սոցիալական ապահովության վճարներ կատարելու պարտավորություն ստանձնելու մասին ձևերը սահմանելու մասին” ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը.	2 փետրվարի, 2009թ., 28-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 7 (325)
Ուժի մեջ է.	18 փետրվարի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

“Արտոնագրային վճարների մասին” ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներ իրականացնող ֆիզիկական անձինք, որոնց նախորդ տարվա ընթացքում այդ գործունեության տեսակների մասով մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների իրացման շրջանառությունը չի գերազանցել 2,5 մլն.դրամը, չեն օգտագործում այլ անձանց աշխատուժը և նախորդ օրացուցային տարում չեն հանդիսացել անհատ ձեռնարկատեր, 2009թ. մարտի 1-ից կարող են դիմել իրենց հաշվառման (բնակության, գործունեության իրականացման) հարկային մարմին, վճարել օրենքով սահմանված արտոնավճար, ստանալ արտոնագիր և իրականացնել արտոնագրում նշված գործունեության տեսակները:

Այս հրամանով սահմանվել են արտոնագրային վճար վճարող համարվելու համար հարկային մարմին ներկայացվող դիմում-հայտարարության ձևը, արտոնագրային վճար վճարողների կողմից պարտադիր սոցիալական ապահովության վճարներ կատարելու պարտավորություն ստանձնելու դեպքում՝ այդ մասին հարկային մարմին ներկայացվող դիմումի ձևը և հարկային մարմնի կողմից տրվող արտոնագրի ձևը:

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2005 թվականի մայիսի 30-ի N 1-05/05-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը.	դեկտեմբերի 8, 2008թ., 13-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 7 (325)
Ուժի մեջ է.	18 փետրվարի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Հրամանով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության 30.05.2005թ. N 1-05/05-Ն հրամանով հաստատված “Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին” հրահանգում, որը պայմանավորված է “Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին” ՀՀ օրենքի ընդունմամբ (21.08.08թ., ՀՕ-150-Ն):

Հրամանով պարզաբանվել են տարվա ընթացքում ԱԱՀ վճարող չհամարվողից ԱԱՀ վճարող դարձած անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման հարցերը: Այդ անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկելու են ոչ թե 3%, այլ 15% կամ 5% դրույքաչափով՝ կախված պարտադիր սոցիալական ապահովության վճարի հաշվարկման օբյեկտից:

Հաստատվել է նախորդ եռամսյակի յուրաքանչյուր ամսում մինչև 5 (ներառյալ) վարձու աշխատող ունեցող գործատուների կողմից ներկայացվող պարտադիր սոցիալական ապահովության վճարների եռամսյակային հաշվետվության ձևը, ինչպես նաև պարզաբանվել է ամսական կամ եռամսյակային կտրվածքով հաշվետվության ներկայացման կարգը: Մասնավորապես՝ 2009թ. 1-ին եռամսյակում հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը որոշելու համար հիմք է ընդունվում 2008թ. 4-րդ եռամսյակի յուրաքանչյուր ամսում (հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր) վարձու աշխատողների փաստացի թվաքանակը, որոնք պետք է արտացոլված լինեն այդ ամիսների համար ներկայացված հաշվետվություններում:

Փաստաթուղթ.	ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության 2007թ. դեկտեմբերի 17-ի N 15-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին
Ամսաթիվը և համարը.	11 դեկտեմբերի, 2008թ., N 14-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 3(321)
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

**Համառոտ նկարագիր**

Հիմք ընդունելով “Պարզեցված հարկի մասին” ՀՀ օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին” ՀՀ

2008թ. օգոստոսի 21-ի ՀՕ-149-Ն օրենքը և “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 72 -րդ հոդվածը՝ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության 2007թ. Դեկտեմբերի 17 -ի “Պարզեցված հարկի հաշվարկման և վճարման կարգի մասին” հրահանգը հաստատելու և ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության 2003թ. Մայիսի 15 -ի N 03/12-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին” N 15-Ն հրամանը:

Փաստաթուղթ.	ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող փաստաթղթերի վերաբերյալ
Ամսաթիվը և համարը.	26 հունվարի, 2009թ., թիվ 1
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր №6(324)
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

**Համառոտ նկարագիր**

Հիմք ընդունելով “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 87 հոդվածի 2 -րդ մասի պահանջները և ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի “ա” կետը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը պաշտոնապես պարզաբանում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի համաձայն, ապրանքներ են համարվում ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող բոլոր տեսակի առարկաներն ու իրերը, այլ գույքը, այդ թվում՝ արժույթը, արժութային արժեքները, էլեկտրական, ջերմային և այլ տեսակի էներգիան, փոխադրամիջոցները, բացառությամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի “բ” կետով սահմանված տրանսպորտային միջոցների:

Ելնելով վերը շարադրվածից՝ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող փաստաթղթերը (լիցենզիաներ, օգտագործման իրավունքներ, թույլտվություններ, հաշիվ ապրանքագրեր և այլն) ապրանքներ չեն համարվում և ենթակա չեն մաքսային ձևակերպումների:

**2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ**

Փաստաթուղթ.	“Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
Ամսաթիվը և համարը.	26 դեկտեմբերի, 2008թ.
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր №7(673), 4 փետրվարի, 2009թ.
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

**Համառոտ նկարագիր**

“Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին” ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի խմբագրությանը համաձայն, օրենքով սահմանված ապահովագրական նպաստները տրվում են, եթե դրանց ստանալու իրավունքն առաջացել է աշխատանքային (ներառյալ՝ փորձաշրջանը) հարաբերությունների մեջ գտնվելու կամ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելուն կամ նոտարի պաշտոն ավարման ժամանակաշրջանում՝ նույն օրենքի 27-րդ հոդվածով սահմանված՝ ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված ժամանակավոր անաշխատունակության օրացուցային օրերի համար, բայց ոչ ավելի, քան օրենքով սահմանված տևողությամբ:

Եթե անձը տվյալ ժամանակահատվածի համար ձեռք է բերել օրենքով սահմանված մեկից ավելի տեսակի ապահովագրական նպաստի իրավունք, ապա նրան նշանակում և վճարում է իր ընտրած մեկ տեսակի ապահովագրական նպաստ:

Համատեղությամբ աշխատելու դեպքում ապահովագրական նպաստը հաշվարկվում, նշանակվում և վճարվում է յուրաքանչյուր գործատուի և նույն օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ տարածքային բաժնի կողմից՝ անկախ մյուսների կողմից նպաստը նշանակելու և վճարելու հանգամանքից:

Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի խմբագրությանը համաձայն, վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը (եկամուտը) հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդած 3 օրացուցային ամիսներին տվյալ աշխատողի համար հաշվարկված՝ սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ հանդիսացող աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից և դրանց հավասարեցված եկամուտներից:

Ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդած 3 օրացուցային ամիսներին վարձու աշխատողի համար հաշվարկված վճարովի ամենամյա արձակուրդի կապակցությամբ վճարված գումարը, պարգևատրումները և աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարները միջին ամսական աշխատավարձում (եկամուսում) հաշվառվում են գումարի մեկ տասներկուերորդի չափով:

Եթե ապահովագրական դեպքին նախորդող՝ տվյալ գործատու մոտ աշխատանքի ժամանակաշրջանը պակաս է 3 օրացուցային ամիսներից, ապա միջին ամսական աշխատավարձը (եկամուսուրը) հաշվարկվում է փաստացի աշխատած ամիսների (օրերի) համար հաշվարկված եկամտից:

Եթե ապահովագրական դեպքին նախորդող եռամսյա ժամանակաշրջանում վարձու աշխատողը ը այս հոդվածի 2-րդ մասի առաջին և երկրորդ պարբերությամբ սահմանված որևէ եկամուտ չի ունեցել, ապա վարձու աշխատողի ապահովագրական նպաստը հաշվարկվում է “Նվազագույն աշխատավարձի մասին” ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի չափից:

Փաստաթուղթ.	ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 7-ի N941-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
Ամսաթիվը և համարը.	15 հունվարի, 2009թ., 61-Ն
Հրապարակումը.	Պաշտոնական տեղեկագիր N°7(673), 4 փետրվարի, 2009թ.
Ուժի մեջ է.	5 փետրվարի, 2009թ.

#### Համառոտ նկարագիր

Համառոտագրի այս ժամանակահատվածի ընթացքում հրապարակվել է ՀՀ կառավարության 15.01.09թ. հաստատված «ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 7-ի N 941-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 61-Ն որոշումը: Ընդունված որոշմամբ փոփոխություն է կատարվել 50 միջոցառումների կատարման ժամկետներում: Ոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել ռազմավարական ծրագրերում և/կամ տեքստում, փոփոխությունը վերաբերում է լոկ միջոցառումների ժամկետներին՝ դրանք ավելի կիրառական-իրատեսական դարձնելու համար:

Փաստաթուղթ.	Վերադաս մաքսային մարմնի կողմից մաքսային գործի հետ կապված՝ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող անձանց ռեեստրի վարման կարգը հստատելու մասին
Ամսաթիվը և համարը.	22 հունվարի, 2009թ.
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°7(673), 4 փետրվարի, 2009թ.
Ուժի մեջ է.	5 փետրվարի, 2009թ.

#### Համառոտ նկարագիր

ՀՀ մաքսային օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան՝ ՀՀ կառավարությունը որոշում է կայացրել, համաձայն որի հաստատվել է

- վերադաս մաքսային մարմնի կողմից մաքսային գործի հետ կապված՝ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող անձանց ռեեստրի վարման կարգը (որոշման N1 հավելվածն է)
- վերադաս մաքսային մարմնի կողմից վարվող մաքսային գործի հետ կապված՝ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող անձանց գրանցամատյանի ձևը (որոշման N2 հավելվածն է):

Փաստաթուղթ.	«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը
Ամսաթիվը և համարը.	26 դեկտեմբերի, 2008թ., ՀՕ-39-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 7 (673), 04.02.2009թ.
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

#### Համառոտ նկարագիր

ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 56-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին պարբերության խմբագրմամբ նախատեսվում է, որ իրավաբանական անձի պետական գրանցումը

մերժելու հիմքերը սահմանվում են օրենքով :

Օրենսգրքի 111-րդ հոդվածի 3-րդ կետի խմբագրության համաձայն բաժնետիրական ընկերության հիմնադիրները պարտավոր չեն մինչև ընկերության գրանցումն ամբողջությամբ վճարել կանոնադրական կապիտալը(նախկինում պարտավոր լինելու փոխարեն), եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Փաստաթուղթ.	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը
Ամսաթիվը և համարը	Դեկտեմբերի 26, 2008թ., ՀՕ-40-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 7 (673), 04.02.2009թ.
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

**Համառոտ նկարագիր**

Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերության խմբագրմանը համաձայն , ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափ չի սահմանվում: Առանձին դեպքերում, կախված ընկերության գործունեության ոլորտից, օրենքով և այլ իրավական ակտերով կարող են սահմանվել կանոնադրական կապիտալի նվազագույն չափեր:

Օրենքի 12-րդ հոդվածը 8-րդ կետով լրացմանը համաձայն, վերակազմակերպման (միաձուլում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) արդյունքում ստեղծվող ընկերության ժողովն իրավագոր է, եթե դրան մասնակցում են փոխարկման արդյունքում տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 50 -ից ավելի տոկոսին տիրապետող բաժնետերեր: Վերակազմակերպման (միաձուլում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) արդյունքում ստեղծված ընկերության հիմնադիր ժողովում նույն հոդվածով սահմանված որոշումները կարող են չընդունվել: Նույն հոդվածով սահմանված հարցերով որոշումներն ընդունվում են հիմնադիր ժողովի մասնակիցների ձայների 3/4-ով:

Փաստաթուղթ.	«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը
Ամսաթիվը և համարը	26 դեկտեմբերի, 2008 թ., ՀՕ-41-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 7 (673), 04.02.2009թ.
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

**Համառոտ նկարագիր**

Օրենքի 4-րդ հոդվածի խմբագրմամբ սահմանվում է, որ նույն օրենքով նախատեսված պետական գրանցումների և այլ ծառայությունների մատուցման համար գանձվում է պետական տուրք` «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափերով:

Փաստաթուղթ.	«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը
Ամսաթիվը և համարը.	26 դեկտեմբերի, 2008թ., ՀՕ-42-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 7 (673), 04.02.2009թ.
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

**Համառոտ նկարագիր**

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափ չի սահմանվում: Առանձին դեպքերում, կախված ընկերության գործունեության ոլորտից, օրենքով և այլ իրավական ակտերով կարող են սահմանվել կանոնադրական կապիտալի նվազագույն չափեր:

Փաստաթուղթ.	«Համահայկական բանկի մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	26 դեկտեմբերի, 2008թ., ՀՕ-30-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 5 (671), 26.01.2009թ.

**Համառոտ նկարագիր**

«Համահայկական բանկի մասին» ՀՀ օրենքը կարգավորում է Համահայկական բանկի ստեղծման և գործունեության կարգը և պայմանները, գործունեության սկզբունքները, կառավարման մարմինների ձևավորման և գործունեության կարգը, Համահայկական բանկի կարգավորման և վերահսկողության իրականացման կարգը, ինչպես նաև Համահայկական բանկի գործունեության հետ կապված այլ հարաբերություններ:

Համահայկական բանկը բաց բաժնետիրական ընկերություն է, որի նպատակն է նպաստել ուժեղ, մրցունակ և գիտելիքի վրա հիմնված հայության ներուժի ձև ավորմանը և այն ուղղել ամբողջ հայության մրցունակության ավելացմանը համաշխարհային շուկայում : Այն իր գործունեությունն իրականացնում է լիազոր մարմնի ռազմավարության ներքո:

Համահայկական բանկն իրականացնում է բանկերին բնորոշ գործառնությունները, բացի ռեզիդենտներից հրապարակային առաջարիկ միջոցով միջոցներ ներգրավելուց:

Փաստաթուղթ.	2009 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին
Ամսաթիվը և համարը.	12 դեկտեմբերի 2008թ., թիվ 11-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր 5(323), 6 փետրվարի 2009թ.
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

**Համառոտ նկարագիր**

Ղեկավարվելով “Պետական վիճակագրության մասին” ՀՀ օրենքի 10 -րդ հոդվածի երրորդ մասի բ) կետով՝ ՀՀ վիճակագրության պետական խորհուրդը որոշում է կայացրել հաստատել “2009թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը”, համաձայն որի սահմանվել է ՀՀ ԱՎԾ-ի կողմից տեղեկությունների ստացման և տրամադրման պարբերականությունները և ժամկետները:

**3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ**

**3.1 Կառուցվածք և գործառնություններ**

Ներկայումս ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում գործում է 2008թ. դեկտեմբերի 4-ին ընդունված ՀՀ կառավարության N 1425 -Ն որոշումը, համաձայն որի միացել են մի քանի նույնանուն ստորաբաժանումներ, լուծարվել է ՀՀ ԿԱ ՊԵ Կ մաքսային ծառայության ուսումնական կենտրոնը, կրճատվել է հարկային (տարածքային) տեսչությունների թվաքանակը 14 ՆՏ (ՏՏՏ)-ով՝ դառնալով 39 հարկային (տարածքային) տեսչություններ (38 տարածքային և առանձին՝ խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունը):

Քննարկվում է տարածքային հարկային տեսչությունների գործառնությունների սահմանման նոր փաստաթուղթը, որը ևս բնորոշելու է անցում ֆունկցիոնալ կառավարման սխեմայի (այն արդեն իրականացվել է հարկային վերադաս մարմնում՝ գլխավոր գրասենյակում): Դրան հետևելու են (հերթականությամբ՝ մինչև 2009թ. սեպտեմբեր) բիզնես պրոցեսների քարտեզների ու ընթացակարգերի սահմանումը, ապա աշխատատեղերի (պաշտոնների) նկարագրերի սահմանումը և կատարողականության չափանիշների սահմանումը:

**3.2 Ծրագրեր և կատարողականություն**

**3.2.1 Ծրագրեր և կատարողականություն / հարկային ծառայության մասով/**

Հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագրով նախատեսված միջոցառումների կատարումն ապահովելու նպատակով հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի «ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի մասով 2009թ. ընթացքում կատարման ենթակա միջոցառումներն ըստ կատարման պատասխանատուների և ժամկետների հաստատելու մասին» N 47-Ս հրամանը: Հաստատված հրամանով յուրաքանչյուր միջոցառման կատարման համար սահմանվել են հիմնական պատասխանատուներ և համակատարողներ: Բացի հարկային վարչարարության ռազմավարության ծրագրից՝ հրամանում ներառվել են նաև հարկային մարմնի մասով կատարման ենթակա միջոցառումներ ՀՀ կառավարության «ՀՀ կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը և կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 1487-Ն, 26.06.08թ. «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» թիվ 775 -Ն, և 15.01.09թ. «ՀՀ

կառավարության 2009թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 40-Ն որոշումներից:

Միաժամանակ, ՀՀ ԿԱ ՊԵԿ համա կարգում տարեկան և այլ աշխատանքային ծրագրերից բխող միջոցառումների կատարման աշխատանքների իրականացումը, կազմակերպումը և արդյունքների կիրառումը կանոնակարգելու նպատակով մշակված ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում ընթացիկ աշխատանքային ծրագրերի կատարողականության և հաշվետվողականության ապահովման մասին» հրամանի նախագիծը ներկայացվել է կարծիքների ՀՀ ԿԱ ՊԵԿ ներսում, իրականացվում են ամփոփման աշխատանքներ, որից հետո այն կներկայացվի ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հաստատմանը:

Համառոտագրի այս ժամանակահատվածի ընթացքում իրականացվել են աշխատանքներ հետևյալ միջոցառումների կատարման ուղղությամբ.

1. Խոշոր հարկ վճարողների ընտրության չափանիշների սահմանում և դրանց հիման վրա հարկ վճարողների գործերի փոխանցում խոշոր հարկ վճարողների հարկային տեսչություն/ծրագրի 1-ին միջոցառում/

Հաստատվել և ուժի մեջ է մտել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12.02.09թ. «Խոշոր հարկ վճարողների ընտրության չափանիշների սահմանման և դրանց կիրառման կանոնակարգը հաստատելու մասին» N 70-Ս հրամանը: Համաձայն հրամանով հաստատված «ՀՀ խոշոր հարկ վճարողների չափանիշներ և կիրառման կանոնակարգը» հավելվածի՝ որպես հիմնական ուղղություն սահմանվել են խոշոր հարկ վճարողների ընտրության 4 չափանիշներ և վերջիններիս շեմերը (ցուցանիշները), դրանք են.

1. իրացումից հասույթը (տարեկան կտրվածքով սկսած 500 մլն. դրամից) - շեմը սահմանելիս հաշվի է առնվել «Հաշվապահական հաշվառման» ՀՀ օրենքում առկա «խոշոր կազմակերպության» սահմանումը: Խոշոր է համարվում այն կազմակերպությունը, որը նախորդ տարվա գործունեությունից հասույթը գերազանցում է 500մլն. դրամը:

2. հաշվեգրված հարկերը (տարեկան կտրվածքով սկսած 37.5 մլն. դրամից) - հաշվի է առնվել, որ ըստ 2007թ. արդյունքներով, հարկային մարմնի տվյալների բազայում առկա տեղեկատվության , կազմակերպությունների կողմից հաշվեգրված հարկերը և սոցիալական ապահովության պարտադիր վճարների բաժինը իրացումից հասույթի ցուցանիշի նկատմամբ կազմել է մոտավորապես 7.5 %

3. ակտիվների հաշվեկշռային արժեքը (տարեկան կտրվածքով սկսած 300 մլն. դրամից) – հաշվի առնվել է մի քանի երկրների փորձ

4. աշխատողների միջին ցուցակային թվաքանակը (տարեկան կտրվածքով սկսած 50 մլն. դրամից)- հաշվի է առնվել «ՓՄՁ պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի դասակարգումը

Միաժամանակ հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12.02.09թ. «Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամսական ամփոփ որոշ ցուցանիշների սահմանման և վերլուծական հավելվածի մասին» N 71-Ս հրամանը: Սույն հրամանով նախատեսվում է գործարկել խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամսական որոշ ամփոփ ցուցանիշների ու դրանց վերլուծությունների հակիրճ նյութի պարբերական (ամենամյա) հրապարակման համակարգ: Առաջին համարը արդեն իսկ հրապարակվել է և տեղադրված է հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի /[www.taxservice.am](http://www.taxservice.am) / «պաշտոնական նորություններ» բաժնում:

2. Հարկ վճարողների սպասարկման ամբողջական ռազմավարության սահմանում/37 -րդ միջոցառում/

Մշակվել և քննարկման փուլում է գտնվում հարկ վճարողների սպասարկման ռազմավարությունը 2009-2011թթ. համար: Լրամշակումից հետո նախատեսվում է վերջինս ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հաստատմանը:

3. Հարկ վճարողների հարկային օրենքների կիրառման մասին պարզաբա նումների տրամադրման

† Ի նկատի է առնվում ՀՀ կառավարության 07.08.08թ. «ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության 2008 - 2011թթ. ծրագիրը հաստատելու մասին» թիվ 941 -Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի միջոցառումները:

նպատակով օրենսդրական փոփոխության նախագծի ՀՀ կառավարություն ներկայացնելը / ծրագրի 43-րդ միջոցառում/

Մշակվել և շահագրգիռ մարմինն էրի կարծիքին է ներկայացվել «Հարկային և մաքսային օրենքների կիրառման մասին տեղեկատվության, պարզաբանումների և մեկնաբանությունների տրամադրման նոր մեխանիզմների սահմանման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, այն նաև ներկայացվել է հանրային կարծիքների: Հայեցակարգը տեղադրված է հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի /www.taxservice.am/ «նախագծեր» բաժնում:

Ամփոփումից և լրամշակումից հետո վերջինս սահմանված կարգով կներկայացվի ՀՀ կառավարություն:

4. Մշակվել են «Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի» հայեցակարգի նախագիծը, ինչպես նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը: Այդ նախագծերը գտնվում են լրամշակման փուլում, որից հետո նախատեսվում է վերջիններս ներկայացնել շահագրգիռ մարմինների կարծիքին և հանրային քննարկման, ապա նաև՝ սահմանված կարգով ՀՀ կառավարություն:

5. Նորաստեղծ փոքր բիզնեսին աջակցելու առանձին միջոցառումների ծրագրի մշակում և իրագործում/ծրագրի 12-րդ միջոցառում/

Իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն փոքր բիզնեսին աջակցելու ուղղությամբ: Ուսումնասիրության արդյունքներն ամփոփվել են, ձևավորվել է ծրագրի նախնական տարբերակը: Վերջնական մոտեցման ձևավորումից հետո այն կներկայացվի շահագրգիռ մարմինների կարծիքին և հանրային քննարկման:

6. Հարկային միջնորդների ինստիտուտի (խորհրդատվական ընկերություններ, բանկեր և այլն) վերաբերյալ հայեցակարգի ձևավորում: Այդ ինստիտուտը կարևորվում է հայտարարագրման զանգվածային գործընթացի և գյուղատնտեսության հարկման համակարգի ներդրման առումով /ծրագրի 60-րդ միջոցառում/

Մշակվել է ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ՝ հարկային միջնորդների ինստիտուտի ձևավորման ուղղությամբ: Իրականացվել են քննարկումներ ՀՀ ԿԱ ՊԵԿ ներսում և ներկայացվել շահագրգիռ մարմինների կարծիքին ու հանրային քննարկման: Նախատեսվում է այն սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարություն:

### 3.2.2 Ծրագրեր և կատարողականություն/ մաքսային ծառայության մասով/

Մաքսային վարչարարության ռազմավարության 2008-2012թթ. ծրագրից բխող միջոցառումներից 8-ը նախատեսվում է ավարտին հասցնել մինչև այս տարվա առաջին եռամսյակի ավարտը: Այդ ծրագրերից երեքը՝ ՏՄաքսային միջնորդի և մաքսային փոխադրողի մատուցած ծառայությունների դիմաց սահմանված սակագների վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության ապահովման կարգը, ՏՄաքսային ձևակերպումների մասնագետների որակավորման քննությունների ծրագիրը և դրանց անցկացման կարգը, և ՏԱմաքս առևտրի խանութների պահեստի և առևտրի սրահի ապրանքներ ի շարժի հաշվառման և հսկողության կարգը, արդեն պատրաստվել և հաստատվել են ՊԵԿ նախագահի կողմից և այժմ գտնվում են ՀՀ Արդարադատության նախարարությունում՝ գրանցման փուլում: Մյուս միջոցառումներն ընթացքի մեջ են և ավարտի կհասցվեն սահմանված ժամկետներում:

ՀՀ մաքսային վարչարարության ռազմավարությամբ նախատեսված 5 միջոցառում, որոնք սկսվել են 2008թ. վերջին, ունեն շարունակական բնույթ և ներկայումս ընթացքի մեջ են:

### 3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

#### 3.3.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների/ հարկային ծառայության մասով/

20.01.2009թ-ից մինչև 20.02.2009թ-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից լսվել է թվով 13 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 25 հարկա յին



ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 20.01.2009թ -ից մինչև 20.02.2009թ. ընթացքում լավել է ընդամենը թվով 17 բողոք, որից.

- բավարարվել է 2 բողոք,
- բավարարվել է մասնակի 2 բողոք,
- մերժվել է 13 բողոք:

### 3.3.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների /մաքսային ծառայության մասով/

01.02.09թ. մինչև 28.02.09թ. ընկած ժամանակահատվածում մաքսային մարմինների տեսչական աշխատանքների հսկողության բաժնի կողմից իրականացվել է հետևյալ աշխատանքների հսկողության բաժնի կողմից իրականացվել է հետևյալ աշխատանքները՝ սահմանվել է հսկողություն ՀՀ տարածքով փոխադրվող թվով 57 տարանցիկ տրանսպորտային միջոցների և բեռների նկատմամբ:

Ուսումնասիրության են ենթարկվել թվով 32 գրություններ, որից 17-ը ԲՄՀ-ները անվավեր ճանաչելու վերաբերյալ, թվով 15 գրություններ ուսումնասիրվել և պատասխանվել են:

Ուսումնասիրությունների արդյունքում թվով 3 մաքսային ծառայողների հայտարարվել է խիստ նկատողություն:

USU Մեդրի, ԳՏՄ Բագրատաշեն Այրում, ՇՏՄ, Բավրայի և Շիրակ օդանավակայանի մաքսակետերում, ՋՏՄ, ՄՃՓ, ԱՏՄ, ԱՄՄՁՄ, ԱՀՀԱՄՄ կատարվել է ՊԵԿ նախագահին ուղղված դիմում բողոքների և առաջարկությունների արկղերի ուսումնասիրություն, աշխատակիցների կարգապահական ընթացիկ ուսումնասիրություններ:

### 3.4 Միջազգային համագործակցություն

ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայության պատվիրակությունը 2008 թվականի դեկտեմբերի 28-29-ը ք.Մոսկվայում մասնակցել է ՀՀ և ՌԴ մաքսային ծառայությունների ներկայացուցիչների աշխատանքային հանդիպմանը՝ նվիրված Կովկաս նավահանգստում ենթակառուցվածքային ապրանքների մաքսային ձևակերպման կազմակերպման հարցերին: Հանդիպման ընթացքում նաև քննարկվել են ՀՀ և ՌԴ միջև ենթակառուցվածքային ապրանքների շրջանառության վերաբերյալ վիճակագրական տվյալների փոխանակման հարցը, սեյֆ-փաթեթների կիրառման վերաբերյալ ՌԴ-ում գործող օրենսդրությունը և այլն:

2009 թվականի հունվարի 26-ից 27-ը մաքսային ծառայության պատվիրակությունն ընդլայնված կազմով շարունակել է աշխատանքները նախկին հանդիպման արդյունքում ձեռք բերված նախնական պայմանավորվածությունների հիման վրա: Հանդիպման ընթացքում մասնավորապես քննարկվել են հետևյալ հարցերը.

- Երևանի “Զվարթնոց”, Մոսկվայի “Շերեմետյեվո” և “Դոմոդեդովո” օդանավակայանների մաքսային ծառայությունների միջև մաքսային հայտարարագրերի էլեկտրոնային տարբերակով փոխանակման հնարավորությունը,
- Օդանավակայաններում մաքսային ձևակերպումների ընթացքում անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի փոխանակման հնարավորություն,
- Մեյֆ-փաթեթների գործնական կիրառման, դրանց մեջ դրվող բեռն ուղեկցող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի, տարանցիկ երկրներում հնարավոր խնդիրների հետ կապված քննարկումներ,
- “Կովկաս” նավահանգստում ենթակառուցվածքային ապրանքների մաքսային ձևակերպման, մաքսակետի շահագործման ժամկետների հետ կապված քննարկումներ, վերոհիշյալ ապրանքների մաքսային հայտարարագրերի էլեկտրոնային եղանակով փոխանակման հարցեր:

Սույն թվականի փետրվարի 18-ից 19-ը ք.Մոսկվայում կայացել է նաև ԱՊՀ անդամ-պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի փորձագիտական ընդլայնված կազմի նիստ, որում հնչելու էին մաքսային գործի տարբեր բնագավթներին առնչվող զեկույցներ: ՊԵԿ մաքսային ծառայության պատվիրակությունը վերոհիշյալ նիստին մասնակցություն չի ունեցել, քանի որ օրակարգում ընդգրկված հարցերի մեծ մասը քննարկվելու են նաև առաջիկայում կայանալիք Մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի (ԱՊՀ ՄՕՂԽ) ամենամյա հերթական նիստի ընթացքում:

2008թ. դեկտեմբերին ՀՀ ԱԳՆ է ուղարկվել համապատասխան գրություն, որով մասնավորապես խնդրվում էր ՀՀ ԱԳՆ աջակցությունը ՊԵԿ մաքսային ծառայության կողմից նախաձեռնած, մաքսային

ուղորտում համագործակցության և փոխօգնության մասին մի շարք համաձայնագրերի ընթացքն արագացնելու, համապատասխան երկրների մաքսային ծառայությունների հետ բանակցություններ սկսելու գործում:

Սույն թվականի հունվարին ՀՀ արտաքին գործերի նախարարություն է ուղարկվել “Հայաստանի Հանրապետության կառավարության և Կանադայի կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին” համաձայնագրի լրամշակված տարբերակը՝ այն կանադական կողմին փոխանցելու նպատակով:

Փետրվար ամսին շահագրգիռ գերատեսչությունների համաձայնեցմանն է ուղարկվել “Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև մաքսային հարցերում համագործակցության վերաբերյալ” համաձայնագրի նախագիծը՝ համապատասխան կարծիքներ և դիտողություններ ներկայացնելու համար:

Նույն ամսին ՀՀ ԱԳՆ համաձայնեցման է ուղարկվել նաև “Հայաստանի Հանրապետության կառավարության և Արգենտինայի Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին” և “Հայաստանի Հանրապետության կառավարության և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին” համաձայնագրերի նախագծերը՝ դրանց կնքման վերաբերյալ նպատակահարմարությունների տեղեկանքների հետ միասին:

### 3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում

#### Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային և մաքսային ծառայությունների մասով/

Համառոտագրի այս ժամանակահատվածում ուսուցում, մրցույթ չի կազմակերպվել:

### 3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն

#### 3.6.1 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն / հարկային ծառայության մասով/

ՀՀ ՊԵԿ հարկային ծառայության “Թեժ գիծ”-ը պաշտոնապես գործում է 2008թ. հոկտեմբերի 14-ից: 2009թ. փետրվար ամսին ՀՀ ԿԱ ՀՄ “Թեժ գծով ստացվել է 485 բողոք և առաջարկություն, որոնք վերաբերել են “ՀՂՄ կիրառման մասին” ՀՀ օրենքի խախտման փաստերին: Բողոքների հիմնական մասն առնչվել է առևտրի կազմակերպման վայրերում ՀՂՄ նոր կտրոնների չտրամադրման կամ փոքր գումարով ՀՂՄ կտրոնի տրամադրման փաստերին: Հարցերի մի ստվար խումբ էլ վերաբերել է հարկային օրենսդրության մեջ կատարված վերջին փոփոխություններին և դրանց առնչվող մի շարք հարցերի: Չանգահարողների մեծ մասին հետաքրքրել են մասնագիտական հարցեր, որոնց պատասխանները ստանալու համար քաղաքացիներին տրամադրվել են համապատասխան տարածքային հարկային տեսչությունների սպասարկման բաժինների հեռախոսահամարները: Չանգահարողների մեծ մասի հարցումները հիմնականում վերաբերել են փետրվարի 6-ին կայացած վիճակահանությանը, խաղարկվող թվերին, շահած կտրոններին և դրանց հետ կապված բազմաթիվ այլ հարցերի:

#### 3.6.2 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն /մաքսային ծառայության մասով/

Հունվարի 20-ից մինչև փետրվարի 20-ը “Թեժ գծով” ստացվել է 350- 400 գանգ: Չանգահարողների գերակշիռ մասը խնդրել է տրամադրել մաքսային մարմինների գործունեության և մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված տեղեկատվություն կամ խորհրդատվության կարիք է ունեցել: Նմանատիպ խնդրանքները բավարարվել են անմիջականորեն հեռախոսային խոսակցության ընթացքում: Վերոնշյալ գանգերից բողոք արձանագրվել է ընդամենը 4 դեպքում:

Բողոքներն առնչվել են գործարքի գնի մեթոդով ապրանքի մաքսային արժեքի որոշմանը, ավտոմեքենաների գնահատման հետ կապված հարցերին, ինչպես նաև ՀՀ մշտական բնակության ժամանող անձանց համար մաքսային օրենսդրությամբ սահմանված արտոնությանը վերաբերող խնդիրներին: Կախված անհրաժեշտությունից՝ քաղաքացուն կամ զանգահարել և պարզաբանում են տվել խնդրի առնչությամբ, կամ գրավոր պատասխան է տրվել, կամ էլ հրավիրել են կոմիտեի համապատասխան ստորաբաժանում՝ հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելու և տեղում անհրաժեշտ պարզաբանումներ տալու նպատակով:

Նշված ժամանակահատվածում “Թեժ գծով” օրական արձանագրվել է միջինը 10-15 գանգ:

Վերը նշված ժամանակահատվածում զանգահարողների կողմից որևէ առաջարկություն չի ստացվել:

### 3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր

#### 3.7.1 Հարկային վիճակագրության մի քանի թվեր

	Ցուցանիշ	2009 թվական	
		Հունվար	Աճի տեմպ %
		1	2
1	Հաշվառված՝ ՀՎՀՀ ստացած հարկ վճարողներ (միավոր)	1030	55.0
2	Հարկային մարմնի կողմից պետ բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն. դրամ), այդ թվում՝	21949.8	76.4
2.1	ԱԱՀ	5560.0	65.9
2.2	Շահութահարկ	3912.1	88.4
2.3	Ակցիզային հարկ	285.0	32.1
2.4	Եկամտահարկ	3090.1	115.2
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	4785.6	72.2
2.6	այլ	4317.0	76.8
3	Հարկային մարմնի կողմից կատարված հարկային ստուգումներ (հատ)	1310	161.7
4	Հարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	892.7	19.5

#### 3.7.2 Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

	Ցուցանիշ	2008 թվական	2009 թվական	Աճի տեմպ %
		հունվար	հունվար	
		1	2	3
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված մաքսային եկամուտներ (մլն դրամ)	17 151	17 852	104.1
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	103 103	78 922	76.5
	արտահանում (մլն դրամ)	18 652	11 389	61.1
	ներմուծում (մլն դրամ)	84 451	67 533	80.0
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	3 755	3 266	87.0